ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021թվականի N 473

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լաերտ Դոխոլյանի դիմումը, Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, որոշում եմ՝

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գյուլագարակ գյուղի 06-029-0023-0004 ծածկագրի տնամերձ հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գյուղ Գյուլագարակ, 6-րդ փողոց,3-րդ նրբ.,թիվ 10 Հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 21 թ. 11 29
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021թվականի N 474

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ,ՎԱՐԴԱԲԼՈՒՐ ԳՅՈՒՂԻ 06-104-0045-0013 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԳԱԳԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ՁԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՐԱ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գագիկ Բաղդասարյանի կողմից ներկայացված դիմումը, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, ժառանգության իրավունքի վկայագիր՝ գրանցամատյան 6381,ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 64-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 8-րդ և 16-րդ մասերով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով, ՀՀ Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ ՝ որոշում եմ.

1.Վերականգնել Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի 06-104-0045-0013 ծածկագրում գտնվող 1391,5 քմ բնակելի կառուցման հողամասի հողահատկացման հիմքերը՝ ա/ Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի 06-104-0045-0013 ծածկագրի հողմասի մակերեսը 1391,5 քմ բ/ հողմասի սահմանները և հատագիծը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 1391,5 քմ հողմասը անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել՝ Գագիկ Աշոտի Բաղդասարյանին:
3.ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Վարդաբլուր գյուղի 06-104-0045-0013 ծածկագրի տնամերձ հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գյուղ Վարդաբլուր, Սարի Թաղ, թիվ 127:
4.Անվավեր ճանաչել Վարդաբլուր համայնքի տնտեսական գիրք N 3 գրքից, գրանցման համար թիվ 262 քաղվածքը և հիմք ընդունել Գյուլագարակ համայնքի ղեկավարի կողմից տրված սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 15.05.1991 թ.-ի N 5 որոշումից տրված քաղվածքը:
5.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏՈՒՆ՝ ԷԴՈՒԱՐԴ ՄԱՐՏԻՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021թվականի N 475

ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամսոն Սինդոյանի դիմումը, «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-Ի կողմից կազմված տեղագրական հատակագիծը, ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 08.10.2021թ. /Գործ թիվ ԼԴ1/1216/02/21/ վճիռը, ՀՀ կառավարության 09.06.2005 թվականի թիվ 843-Ն որոշումը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ, 191-192-րդ,303-306, 360-րդ հոդվածներով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 43-րդ հոդվածով, 64-րդ հոդվածով, 60-րդ հոդվածով, 118 հոդվածով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 որոշմամբ որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Կուրթան Գյուղի 06-057-0073-0001 ծածկագրից տարանջատված անասնակերի շենքի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 0.15792 հա:
2. Վերականգնել Սամսոն Սինդոյանին պատկանող անասնակերի շենքի զբաղեցրած և սպասարկան համար անհրաժեշտ հողամասի հողհատկացման հիմքերը 0.15792 հա մակերեսի չափով, որը օրենքի ուժով սեփականության իրավունքով փոխանցվում է Սայադ Աբրահամի Ալեքսանյանին, պայմանով՝ հողամասը օտարելու դեպքում վճարել հողամասի կադաստրային արժեքը:
3. Հողամասի սահմանները որոշվում են «ԳԱԳԻԿ ՄԵՍՐՈՊՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ» ԱՁ-Ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
4. Հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Գյուլագարակ համայնք, գ.Կուրթան 12 -րդ փողոց. թիվ 15:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021թվականի N 476

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 Թ.-Ի ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 447 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 4-րդ կետերով, 34-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, որոշում եմ.

1.Գյուլագարակ համայնքի ղեկավարի 2021 թվականի նոյեմբերի 16-ի «ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ, ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԻ 06-029-0074-0003 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՎԱՉԱԳԱՆ ԱՅՎԱԶՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՐԱ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ » թիվ 447 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ 3-րդ կետի «և» տառից հետո գրված «2002 թվականին կառուցված 25,10 քմ ծածկի նկատմաբ Վաչագան Այվազյանի սեփականության իրավունքը» թվերը և բառերը փոխարինել «1972 թ.-ին կառուցված 0,9 քմ պարիսպ» թվերով և բառերով, 4-րդ կետի «և» տառից հետո գրված «1972 թվականին կառուցված 0,90 քմ պարիսպ» թվերը և բառերը փոխարինել «2002 թ.-ին կառուցված 25,10 քմ ծածկ» թվերով և բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 21 թ. 11 30
գ.Գյուլագարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Գյուլագարակ, 025662167, gyulagarak.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 477

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 91 որոշման, ՀՀ կառավարության 11.05.2002թ. թիվ 498 որոշման 2-րդ կետի «ա» ենթակետի, ՀՀ կառավարության 19.03.2015թ թիվ 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով «Դենդրո Գարդեն» ՓԲԸ կողմից ներկայացված դիմումը, «Մարգարյանս բիլդինգ գրուպ» ՍՊԸ-ի կողմից մշակված աշխատանքային նախագիծը, որոշում եմ.

1.«Դենդրո Գարդեն» ՓԲ ընկերությանը տրամադրել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղում 06-027-0183-0147 ծածկագրով հողամասում երկհարկանի անձնակազմի տնտեսական մասնաշենքի (միջին ռիսկայնության աստիճանի օբյեկտներ՝ II կատեգորիա) կառուցման շինարարական աշխատանքների կատարման թույլտվություն:
2.Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

20 21 թ. 12 01
գ.Գյուլագարակ